ԵՐԳԵՐ, ԽԱՂԵՐԳԵՐ

1. ԳՈԴԻ

Գոդի, դոդի, այ դոդի,
Մարդը մեռած, այ գոդի,
Տղան մեռած, այ դոդի։
Ծվծվոցաղ նղացալ ըմ,
Կըթկթոցտդ նղտցալ ըմ։
Կյարմուր արե ըմ օղում,
Կանաչ սարեր ըմ օղում,
Ցորտ-ցորտ ըխպրեքյ ըմ օղում։
Մին ծու տվեքյ թաթեն տինիմ,
Փուշի տվեքյ վարսը քսիմ։
Գոդի, դոդի, այ դոդի...

2. Ճոլի

Ճոլի-վալի՝ ճոլ չիկա,
Խավիծ անիմ՝ եղ չիկա,
Ճոլին ընդավ ծովը,
Ծովան տյուս օնոդ չիկա։
Քյանդիր պերեքյ՝ այուս օնինքյ,
Ջոովան պերեքյ՝ կցան սանք,
Եղ պերեքյ՝ վարսը քսինքյ,
Ծու պերեքյ թաթեն սինինքյ։
— Դե պերեքյ, տեսնանք՝ հի՞նչ ըք պերում։

3. ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳ

Լա՜յ լա՜յ բալա, լա՜յ լա՜յ,
Լա՜յ լա՜յ բալա, լա՜յ լա՜յ,
Նի կապիմ՝ քոնդ տանի,
Թող անիմ՝ շոնը սանի։
Լա՜յ լա՜յ բալա, լա՜յ լա՜յ,
Լա՜յ լա՜յ բալա, լա՜յ լա՜յ,
Քու մար տմեն ճիբա խմալ չի,
Քու մար ամեն խոսա կծալ չի։
Լա՜յ լա՜յ բալա, լա՜յ լա՜յ,
Լա՜յ լա՜յ բալա, լա՜յ լա՜յ։

4. ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳ

Բալում, բալում Բարխուդար,
Ըշանա մհալեն սար Բարխուդար,
Մեծ-մեծ մուլքերեն սար Բարխուդար,
Լա՜յ, լա՜յ, լա՜յ Բարխուդար, լա՜յ։
Մեծ-մեծ պլատեն սար, Բարխուդար լա՜յ,
Հորդ մեծ բդեբեն սար, Բարխուդար լա՜յ։
Երե բաղը, Ներքե բաղը,
Խաչին հաբթը, Բաղեն սակը,
Բուրխուդարա տափը, Խրմհաաը,
Կյուլին ղուղեն, Շմալա հարթը,
Խսիրեն սափը, մեր Տուռնարտը
Լոխ քեղ մատաղ, Բարխուդար լա՜յ։
Էնքան քուրերից ետը՝
Ազիզ բալա, Բարխուդար լա՜յ...

5. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳԵՐ

ա) Պապը կանչում է.—Հե՜, հե՜, հե՜ Սարքիս...
Սարքիսը պատասխանում է.— Հե՜յ...
— Դանան եկալ ա՞...
— Չէ, չէ, չէ՜...
— Արտ, պա ես հիշտե՞ղ քյինիմ,
Աշան քյինիմ, քրքաշան քյինիմ,
Ղղդտլան քյինի՞մ, սաջոմը կղտալան քյինի՞մ,
Գիշի քյինի՞մ, մկները շիշի քյինի՞մ,
Հացե քյինի՞մ, ...կացե քյինի՞մ,
Կղտրծե քյինի՞մ, թա պդարճե քյինիմ,
Նինդի քյինիմ, թա հացը թնդյի քյինիմ...*

բ) Լախ անե, լախ անե,
Դային կյա,
Խաշխաշ պիդրի, ճաշ անինք,
Վեննան փոնինք, քաշ անինք...

6. Ղարաբաղում հեքիաթասացը (քաթ ասողը) պատմելուց առաջ ասում է հետեյալ նախաբանը։

Քաթ, քաթ մին չվտլ ցակատ,
Վեչ կոթ օնե, վեչ արկաթ,
Ճղացեն կըտրեն օխտը դյուլ,
Օխտը դյուլան մին բլբուլ։
Հաստն, Հասան տոռնը պեց,
Փադի մասան առռնը պեց,
Մին հավ օնիմ կոտ կաոց,
Մին ծյու տծից՝ լոխ տըղնոց,
Պապեն կերավ, քյինից հոնձ,
Եկավ տեսավ թախտեն տակեն մին մենձ... կլոնձ։

Իբրե վերշաբան տտլիս է բոլոր ոմանկդիրների անունները հետեյալ չտփածո ձևով։

Աշոաը սական կծից,
Արամը մաչան կծից,
Պոդոտը մի քրունչան կծից,
Սիրանը կոխկան կծից,—
և այսպես բոլորին թվտրկում է և ապա.
Լոխ կերան, կշացան
Քաթ ըսողեն պեն չմնաց։

* Այսպես չափածո թվարկվում են շրջապատի բոլոր գյուղերի անունները (Ս. Բ.)։

Տարրերակ

Քաթ, քաթ և այլն...
Պապը քյնից հոնձ,
Պերավ մին չալ կլոնձ,
Մինը կծեց հազ ըըավ,
Մինը կծեց տազ ըրավ։

7. *Ես քեղ տեսա մըեր ըխպիրին,*
Մըեր ըխպիրի ռանդը ռիրին,
Դե հինչ կանիս՝ էն օրանց տեսը,
Աչկս հենա քու փիՆոչիրին։
Այ ախճիգյ, չան ախճիգյ,
Դարգիս գարման, հայ ախճիգյ։
Ջուրս չամիչ չիրավ լիգյը,
Աչկս հենա չիրավ լիգյը,
Պա խե՞ եկար, չոր անց կացեր,
Կոժա ցորա-ցորա ճիրավ լիգյը։
Այ ախճիգյ, չան ախճիգյ,
Դարգիս գարման չար ախճիգյ։
Էս ինչ կրակ էր վեր ինձ ավեր անգին,
Դարգը ավեր, ամեն հանգի,
Պա խե՞ մին կաթ ճյուր չը ավեր,
Վեր քու ավված պոգը հանգի։
Այ ախճիգյ, ջան ախճիգյ,
Դարգիս գարման, չար ախճիգյ։

8. *Վեր էշը զոռաս ա,*
Հարսը ուրխնաս ա,
Գիգաս ա, վեր ապերը կյաս ա։
Վեր ապերը կյաս ա,
Թափանը պիըխս ա,
Հարսը իփիս ա,
Ապերը նսաես ա, ուաես ա։
Թափանր կծես ա, ծքյես ա,
Ծքյես ա, ծքյես ա,
Ճկաաեն արքցնես ա։
Վեր ճկաաեն արքցնես ա,
Հարսը ուրխնես ա.
Վեր հարսը ուրխնես ա,
Ապերը ծծզես ա։

9. *Թան, թան, թթո թան,*
Օխար ազա օնիմ՝ օխար կյութան,
Պիրոմ ըն առնս լցնոմ,
Մինը առնավ, մինը հուըթավ։
Մինին պերածը մազ ա, մինինը՝ պուրթ ա,
Մինը մհենգյ ա պիրոմ, մինը՝ սուրթա,
Պայց էս մինին պենր պուրթ ա։
Օխար ազա օնիմ, օխար կյութան,
Մին հարս օնիմ՝ թամամ քյութ ա։

Մ Ա Կ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

1. ԱՇԱՆԵՑՈՆՑ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ

ա

Ման աշըզամ Զախրարանի,*
Տանունց Թյունի,
Մուխրի Սահակ,
Բեգլու Սահակ,
Վ... կախ Փալազ Ղուլի,
Օնչուա Լալա
Քոռ Փթալի
Վուչլուտ Բալի,
Քաո Տանի,
Արարաչի,
Պըեկ Կուքի,
Բըխկլի Ակոփ,
Մամա ծալի,
Ծուճուփ,
Ալա Բալա,
Նարի գայի,
Թալանի,
Դալա,
Կյուառում,
Պարին Ցագուփ,
Գուգաս։

բ

Բրխկուլուն Ակոփ,
Տանունց Թոնի,
Ջեյրան Ալի,
Օգըմ Սարգիս,
Տը... Տանի,
Հոթար Հանես,
Միրզա Համիդ,
Թութուն Ծաաուը,
Աըաքաչի,
Ղուզլյագ Խաչի,
Քոռ Փթալի,

* Ես (Թրք.)։